## Ի ՇԱՄԱԽԻՈՅ.

### Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Շամախւոյ Օրիորդական վարժարանի Հոգաբարձուքս ուղարկելով խմբագրութեանդ 1872 Թուականում յիշեալ վարժարանի համար եղած մուտքի եւ ծախքի հաշուեցուցակը, Ընկերութեանս Անդամոց՝ Խնամակալուհեաց, Ուսուցչաց, Ուսանողուհեաց եւ ուսանելի առարկայից ցուցակի հետ միասին, խոնարհաբար խնդրումենք Արարատ ամսագրոյդ միջոցաւ հրատարակել ի գիտութիւն Ազգայնոց:

Հոգաբարձուք
Պօղոս Ներսէսեանց
Զաւէն Տէր Ստեփանեանց
Յովհաննէս Խալաթեանց

Ի 10 Մայիսի 1873 ամի
Ի Ք. Շամախի:

| | Րուբ. | Կոպ. |
|---|---|---|
| 1872 Թուականի Յունվարի 1ին մնացել է Վարժարանին պատկանեալ մայր գումար . . . . . . . . . . | 476 | 50 |

#### ՄՈՒՏՔ *)

| | Րուբ. | Կոպ. |
|---|---|---|
| Քսան Անդամների տարեկան տուրք ամեն մէկն 10 մանէթ . . . . . . . . | 200 | |
| Տասն եւ ինն Խնամակալուհեաց տարեկան տուրք ամեն մէկն հինգ մանէթ . . | 95 | |
| Զանազան անձերից ստացած նուիրադրամք . . . . . . . . . . | 28 | 40 |
| Աշակերտուհիներից ստացած Թոշակադրամք . . . . . . . . . . | 50 | 50 |
| Վարժարանի մայր գումարից տոկոսադրամք . . . . . . . . . . | 89 | 80 |
| Գումար . . | 940 | 20 |

#### ԾԱԽՔ *)

| | Րուբ. | Կոպ. |
|---|---|---|
| Վարժարանի տան հօթնամսեայ վարձ . | 54 | |
| Նախապ. դասատան ուսուցչին վեցամսեայ վարձ . . . . . . . . . | 48 | |
| Վարժուհւոյ հօթնամսեայ վարձ . . . | 56 | |
| Ձեռագործութեան Թելի. փառեկախայտի եւ զանազան մանրամասն ծախք . . | 55 | 97 |
| | 195 | 97 |
| Մուտք. . . | 940 | 20 |
| Ծախք. . . | 195 | 97 |
| Ներկայ տարւոյս Յունվարի 1ին մնաց գանձապահի մօտ . . . . . . . . | 746 | 25 |

#### ՑՈՒՑԱԿ

Շամախւոյ Օրիորդական վարժարանի դասատանց, Ուսուցչաց, աշակերտուհեաց եւ ուսանելի առարկայից 1872 Թուականի համար:

| Դասատուններն եւ նրանց մէջ աւանդած առարկաները . . . . . . . . . . | Թիւ աշակերտաց: Թիւ դասատուաց | Թոշակաւորաց | Ձրիաւարժից | Ընդ ամէնը |
|---|---|---|---|---|
| Ա. դասատուն, սորա մէջ աւանդւում են կրօն—հին կտակարանից, Աւետարանի Թարգմանութիւն, Քերականութեան սկզբունք առանց ձեռնարկի, Հայոց պատմութիւն, Ռուսաց լեզու, Թուաբանութիւն, Ազգ. եւ Եկեղ. Երգեցողութիւն, Հայոց եւ Ռուսաց վայելչագրութիւն եւ ձեռագործութիւն: Սորանում գտնւումեն . | 2 | 11 | 5 | 16 |
| Նախապ. դասատուն, սորա մէջ ուսանումեն Հայերէն տառաճանաչութիւն գրելը միասին, Եկեղ. եւ Ազգ. Երգեցողութիւն. սորա մէջ գտնւումեն . . | 2 | 12 | 4 | 16 |
| | 4 | 23 | 9 | 32 |

Նուիրատուք յընթացս 1872 ամի.

Շամախեցի Սամուէլ Թարրայեանց . . . 1

(*) Մինչև ցայսօր չէ տուած այս վարժարանը Բագուայ Մարդասիրական Ընկերութեան խոստացած դրամական նպաստը, որը եթէ արդէն կատարուած համարակել էր 71 Թուականի ամսագիր Արարատի միջոցաւ

(*) Այս վարժարանը Շամախում 72 Թուականի Յունվարի 16 ին պատահած երկրաշարժութեան պատճառաւ հինգ ամիս չափ մնացել է փակուած.

| | |
|---|---|
| Տամ. Պ. Ներսէսեանց Պօղոս . . . . | 2 |
| Տամ. Միքայէլ Յովհաննէսեան Բասսյեանց | 3 40 |
| Տամ. Յարութիւն Ներսէսեանց . . . . | 5 |
| Տամ. Յովհաննէս Միրզաբէգեանցի ձեռամբ զանազան մարդկանցից նուէրք հաւաքուած . . . . . . . . . . . | 17 |
| | 28 40 |

Անդամք.

1. Անդրէաս Արքեպիսկոպոս, 2. Սահակ Արեղայ, 3. Մեժլում բէկ Ավշարեանց, 4. Յարութիւն Համասփիւռ, 5. Պետրոս բէկ Տէր Մարկոսեանց, 6. Կարապետ Քալանթարեանց, 7. Հայրապետ բէկ Բաղրեան, 8. Միքայէլ Ղարաղաշեանց, 9. Բաղէշ բէկ Սարգիսբէկեանց, 10. Պօղոս Ներսէսեանց, 11. Արտեմ Ներսէսեանց, 12. Գրիգոր Դիլտարեանց, 13. Սամուէլ Բաղրեանց, 14. Գէորգ Կաճկաճեանց, 15. Շահնշահ Վլասեանց, 16. Մովսէս Ռոստամեանց, 17. Մովսէս Աշուղեանց, 18. Յարութիւն տէր Եսայեանց, 19. Յովհաննէս Միրզաբէկեանց, 20. Միքայէլ Արամեանց, 21. Աբրահամ Գասպարեանց, 22. Յովհաննէս Իւզբաշեանց, 23. Ջաւատ Տէր Ստեփաննեանց, 24. Հայրապետ Ղուկասեանց, 25. Յարութիւն բէկ Տէր Սարգսեանց, 26. Աստուածատուր Ջաքարեանց. 27. Խուդատ Բարաղամեանց, 28 Յովհաննէս Խալիպեանց, 29. Խաչատուր բէկ Եղիազարեանց, 30. Նիկոլայ Վարդապետեան. 31 Ներսէս Աթաբէկեանց *):

Անդամուհիք.

1 Մարգարիտ Ջոհրապետեանց. 2 Մարիամ Ջոհրապեանց. 3 Ջաւահիր Ավշարեանց. 4 Եղիսաբէթ Համասփիւռ. 5. Ջաւահիր Ղորղանեանց. 6 Ոսկի Կաճկաճեանց. 7 Նարկիզ Միրզաբէկեանց. 8 Թագուհի Նաջարեանց. 9 Խանում Խալապեանց. 10 Կատարինէ Ներսէսեանց. 11 Սօնա Ներսէսեանց. 12 Մարիամ Նիկիտեանց. 13 Զմրադ Քալանթարեանց. 14 Մարիամ Իւզբաշեանց. 15 Մինայ Ջաքարեանց. 16 Մարգարիտ Ավշարեանց. 17 Ջաւահիր Միրզաբէկեանց. 18 Թագուհի Մարդանեանց. 19 Մարիամ Աշուղեանց. 20 Մարիամ Յովհաննէսեան Տէր Մարկոսեանց. 21 Խանում Լազարեանց. 22 Աֆիահայեաթ Եղիազարեանց. 23 Եղիսաբէթ Վարդանեանց. 24 Մարիամ Լալայեանց. 25 Ջաւահիր Լալայեանց. 26 Ջաւահիր Կեօկչայեանց. 27 Փեւրոնիա Աթաբէկեանց. 28 Մարիամ Ղարաղաշեանց *):

(*) Այս անդամներից 1872 թուականի տուրք ստացուել են քսանից միայն. մնացած է ապառիկ չորս անդամոց վերայ. և հրաժարուած են ընկերութեան անդամակցութենից չորս անձինք, այն է Պ. Համասփիւռ բժիշկ, Մովսէս Ռոստամեանցը, Խուդատ Բարղամեանցը և Լևոն Ղորղանեանցը, վերջինս մահուան պատճառաւ։ Իսկ ստորանուն երեք անդամքը յաւելուած են ներկայ 73 թուականում

(*) Սորանցից 1872 թուականի տուրք ստացուած են տասն և ինն Անդամուհիներից. երկուքը հրաժարուած են, այն է. Եղիսաբէթ Համասփիւռը և Ղորղանեանց Ջաւահիրը. իսկ սորանից եօթն Անդամուհիք յաւելուած են ներկայ 73 թըւականում

---

## Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒ.

Ինչպէս յայտնի է "Արարատի,, ընթերցողներին, անցեալ տարի Փետրուարի 1-ին Վաղարշապատ գիւղում բացուեցաւ, հրամանաւ Վեհափառ Հայրապետի, Ս. Հռիփսիմեան Օրիորդական Դպրոցը: Հոգաբարձուհիների խնամակալութեամբ, տեսչի աշխատութեամբ, վարժապետների եւ վարժուհու ջանասիրութեամբ այս դպրոցը մի տարուայ մէջ հասաւ բաւականին ծաղկեալ դրութեան: Բացի ձեռագործութիւնից, որի վերայ դարձրած էր առանձին ուշադրութիւն, ուսուցանելի առարկաներն էին՝ 1) Հայկական ընթերցանութիւն աշխարհիկ բարբառով, 2) Սրբազան պատմութիւն, 3) Հայկական վայելչագրութիւն, եւ 4) Երգեցողութիւն:

Այս տարի Ապրիլի 22-ին կատարուեցաւ Ս. Հռիփսիմեան Դպրոցի առաջին տարեդարձի տօնախմբութիւնը եւ հարցաքննութիւնը հանդերձ վիճակախաղարկութեամբ օրիորդների ձեռագործների: Դպրոցի փոքրիկ դահլիճը ներկայացնում էր Վաղարշապատի համար մի նոր եւ միանգամայն սրտաշարժ տեսարան: Մի պատի վերայ փայլում էր Նորին Վեհափառութեան մեծադիր հոյակապ պատկերը շրջապատած մեծ եւ գեղեցիկ պսակով դալար ոստերից եւ ծաղիկներից հիւսած, պատկերի չորս կողմը եւ միւս